ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԼՍՏՅԱՆ ՆԵԼԼԻ ԲԱԿՈՒՐԻ

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՆԳԼԻԱԳԻՐ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՄ

Ժ. 01.07- «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Կարլեն Ռաֆայելի Մատինյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Սամվել Պարգևի Մուրադյան**

բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր **Կարեն Հակոբի Ջալլաթյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023թ.-ի նոյեմբերի 28 -ին՝ ժամը 14.30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի 066 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 422 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2023 թվականի հոկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բ.գ.թ.,դոցենտ **Ա.Վ.Եգանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության մեջ ուսումնասիրվում է ազգային ինքնության թեման 20-րդ դարի ամերիկահայ անգլիագիր գրողների արձակում, մասնավորապես Վ.Սարոյանի, Լ.-Զ.Սյուրմելյանի, Ջ.Հաշյանի, Հ.Խաչիկյանի, Փ.Բալաքյանի, Փ.Նաջարյանի, Փ.Սուրյանի, Ն.Գրիգորյանի, Ք.Էդգարյանի, Դ.Խրդյանի ստեղծագործություններում:

Աշխատանքը քննելիս մեծ ուշադրություն է դարձվել ազգային ինքնության բացահայտմանը, որը քննվել է հայ ամերիկյան համատիրույթում: Ամերիկյան գրականության մեջ, սկսած 20-րդ դարասկզբից, իր մնայուն տեղն է հաստատել ազգային ինքնության, ազգապահպանության թեման, որն առավել կարևոր է հատկապես փոքր ազգերի ու ժողովուրդների համար, որոնց կենսագործունեությունը խարսխված է կյանքի կազմակերպման առավելապես ավանդական-մշակութային մեխանիզմների վրա: Ի տարբերություն 20-րդ դարասկզբին Ամերիկայում ձևավորված ամերիկյան ազգային ինքնության՝ լեզուն, կրոնը, պատմական հիշողությունը, կենցաղը, պատմական զարգացման արդյունքում ձևավորված պատկերացումների և վարքի նորմերի ամբողջությունը, մշակութային ավանդույթներն ու սովորույթները, հոգեբանությունն ու արժանապատվությունը կազմում են հայ ազգային ինքնության ընդհանրական որակը, որը ձևավորվում է ներազգային շփումների, փոխներգործությունների և համակեցության արդյունքում, ինչը նշանակում է, որ ազգային ինքնության մեջ ամփոփված են անցյալում ձևավորված զգացմունքները, գաղափարներն ու պատմական հիշողությունը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկա ժամանակներում աշխարհասփյուռ հայության առջև ծառացած նորօրյա մարտահրավերների, լինելության բարդ իրավիճակների պայմաններում թեման առավել, քան երբևէ, հրատապ է և ունի արդիական հնչողություն:

20-րդ դարի ամերիկահայ անգլիագիր գրողների արձակը հայ ժողովրդի ազգապահպանության խնդիրների անմիջական արձագանքն է, բայց և այնպես, հակառակ հայագիր և օտարագիր գրողների որոշ ջանքերի՝ մինչ օրս Սփյուռքում ազգային ինքնության պահպանման թեման դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չէ: Ատենախոսությունը համակողմանի վերլուծությամբ, ներկայի և անցյալի զուգահեռմամբ վեր է հանում 20-րդ դարի ամերիկահայ անգլիագիր գրողների արձակում ազգային ինքնության պահպանման թեման, այս համատեքստում այն արդիական հնչողություն ունեցող և անհետաձգելի խնդիրներին անդրադառնալու փորձ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Մեր գրականագիտության մեջ դեռևս խորքով չի ուսումնասիրվել ազգային ինքնության թեման ամերիկահայ անգլիագիր գրողների արձակում: Առանձին-առանձին տարբեր տեսանկյուններով և թեմաներով քննվել և

արժևորվել են ամերիկահայ անգլիագիր գրողների գործերը: Թե՛ օտարերկրացի, թե՛ հայրենի գրաքննադատները հիմնական կողմերով ներկայացրել են ամերիկահայ անգլիագիր գրողների արձակ ստեղծագործությունները, սակայն նրանցից և ոչ մեկը անգլիագիր գրողների գործերը չի քննել ազգային ինքնության համայնապատկերում: Այդ բացը մասամբ լրացնում է սույն ատենախոսությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է 20-րդ դարի ամերիկահայ անգլիագիր գրողների արձակ ստեղծագործությունների ուսումնասիրության միջոցով բացահայտել և արժևորել դրանցում ազգային ինքնության թեման՝ իր արտացոլումներով և դրսևորումներով:

Ուսումնասիրության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել սփյուռքահայ գրականության մաս կազմող հայ անգլիագիր արձակը,
- վեր հանել ազգային երկվության խնդիրը ամերիկահայ անգլալեզու գրողների ստեղծագործություններում,
- քննության առնել ամերիկահայ անգլիագիր գրողների առջև դրված հիմնախնդիրները՝ ազգայինից նահանջը, աշխարհասփյուռ հայության ազգային ինքնությունն ու ապրելու իրավունքը պահպանելու, հայոց նահանջը կանխելու անխոնջ ջանքերն ու հերոսական մաքառումները, ազգային-ազատագրական պայքարը որպես ազգային ինքնության դրսևորում դիտելը,
- ուսումնասիրել ամերիկահայ անգլիագիր գրողների ստեղծագործություններում ազգային ինքնության խորքային դրսևորումները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ

Ուսումնասիրության օբյեկտը 20-րդ դարի ամերիկահայ անգլիագիր գրականությունն է, իսկ առարկան՝ ամերիկահայ անգլիագիր գրողների արձակում արտացոլված ազգային ինքնության թեման: Ազգային ինքնությունն ամբողջական և հիմնավոր ներկայացնելու նպատակով դիտարկել ենք օտար և հայրենի գրողների, գրաքննադատների աշխատությունները, որոնք հնարավորություն են տվել խնդրին նայելու տարբեր կողմերից և ամբողջական պլանով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության մեջ կիրառել ենք պատմահամեմատական, կառուցվածքային-տիպաբանական մեթոդները, գրական երկերի վերլուծության համակարգային և ամբողջական վերլուծության սկզբունքը: Փորձ է արվել՝ վեր հանելու ուսումնասիրվող նյութում պատճառահետևանքային կապերը, առնչությունները: Ատենախոսության մեջ օգտագործել ենք գրականագիտության

ինչպես նախորդ շրջանների ուսանելի փորձը, այնպես էլ ժամանակակից ուսումնասիրություններն ու ձեռքբերումները:

ՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրության տեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ ատենախոսության նյութը կարելի է ներառել հայագիտական ուսումնասիրությունների ոլորտում, քանի որ այն շատ դեպքերում օգնում է լույս սփռելու հայի հավաքական կերպարի վրա: Ընդհանուր առմամբ ատենախոսության նյութը կարևոր է օտարագիր հայ գրականության քննության շրջանակներն ընդարձակելու գործում: Աշխատանքում առաջ քաշված դրույթները և մոտեցումները կարող են հիմք դառնալ օտարագիր գրականության հետագա զարգացման համար:

Ատենախոսությունը՝ որպես անդրանիկ փորձ, կարող է նպաստել հետագա հետազոտողներին ազգային ինքնության թեման օտարագիր գրողների ստեղծագործություններում լուսաբանելու հարցում: Այն գիտագործնական առումով կարող է օգտակար լինել գրականագիտության, պատմագիտության բնագավառների հետազոտողներին, ինչպես նաև բուհերի ուսանողներին:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի Արտասահմանյան գրականության և համեմատական գրականագիտության բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են տպագրված գիտական տաս հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ամբողջական ծավալը 163 համակարգչային էջ է:

Ներածության մեջ անդրադարձել ենք օտարագիր գրականության մեկնության անհրաժեշտությանը, ներկայացրել ենք հարցի պատմությունը, մեզանից առաջ ուսումնասիրված աշխատությունների համապատկերում արժևորել խնդիրը, հիմնավորել աշխատանքի արդիականությունը, գիտական նորույթը, թվարկել օգտագործված մեթոդները և մատնանշել աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, թեմային առնչվող գրականությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԷԹՆԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Առաջին գլխում ներկայացվել են ամերիկահայ անգլիագիր գրականության ընդհանուր համապատկերը, 20-րդ դարի հայ-ամերիկյան

գրականությունը ձևավորող գրողների գոյափիլիսոփայական և ազգային ինքնության պահպանման խնդիրները, հարցադրումներին առնչվող սկզբունքները, քննվել այն պատճառահետևանքային կապերն ու հանգամանքները, որոնց հիմքում ձևավորվել է հայ-ամերիկյան գրականությունը: Անդրադարձ է արվել ամերիկյան և ազգային տիրույթներում ազգային ինքնության երկվությանը, այն դիտվել որպես մշակութային դրսևորում: Անցյալի և ներկայի համադրությամբ քննվել է ազգային ինքնության պահպանման թեման Վիլյամ Սարոյանի գործերում, Լևոն-Զավեն Սյուրմելյանի «Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ» (“I Ask You, Ladies and Gentlemen”, 1945), Դավիթ Խրդյանի «Ճանապարհ տնից» (”The Road from Home”, 1979) վեպերում՝ համակողմանիորեն ներկայացնելով ամերիկյան հասարակության մեջ իր տեղը որոնող հային:

Ամերիկահայ անգլիագիր գրողների ազգային ինքնության պահպանման ջանքերն ու ճիգերն անգնահատելի են: Նրանք ազգային ինքնության, դիմագծի և անհատականության հիմքում դրել են ազգային ինքնագիտակցությունը, մտածողությունը, ավանդույթներն ու բարքերը, լեզուն, պատմական հիշողությունը, մշակույթն ու հոգեկան կերտվածքը: Նրանց, ինչպես նաև աշխարհասփյուռ հայ գրողների հիմնական նպատակը ազգային ազատագրման ոգեղեն գաղափարն ու իրենց ինքնության պահպանման գերխնդիրը մշակույթում բարձրաձայնելն էր:

Հաղթահարելով լեզվական բարդույթները՝ հայ գրողներից շատերը մաս կազմեցին անգլիագիր գրականության՝ իրենց ստեղծագործություններով հարստացնելով ամերիկյան մշակույթը: Նրանցից ոմանք անգլալեզու գրականությամբ հաճախ միտումնավոր արծարծում էին հայկական թեմաներ՝ իրենց առջև դնելով երկու հիմնախնդիր՝ օտար ընթերցողին ճանաչել տալ դարավոր պատմություն ունեցող եղեռնատես հայ ազգին, ազգայինից հեռացածներին ներգրավել ազգային կյանք: Նրանցից ոմանք ինչ-ինչ պատճառներով հեռացել են ազգային ավազանից՝ անդամագրվելով օտար գրականության: Ազգությամբ հայ գրողները՝ հայագիր թե օտարագիր, իրենց վրա էին կրում ժամանակի գրական ազդեցությունը, հետևում այն գրական ուղղություններին և դպրոցներին, որոնք արտացոլում էին ժամանակի կյանքը, ընկերային, հասարակական հարաբերությունները, ընդգծում անհատի դրաման, նրա հայացքները, նրա ունեցած դերն այդ հասարակության և առկա իրավիճակների մեջ: Միանգամայն հասկանալի էր. ելնելով կյանքի մարտահրավերներից, օտարացվածությունից՝ ամերիկահայ հայագիր և անգլիագիր գրողներն առաջնությունը տալիս էին գոյափիլիսոփայությանը և «նոր գրականության» հայացքներին:

Ամերիկյան բազմազգ խառնարանում, որը Սփյուռքի մյուս գաղթօջախներից զանազանվում էր տարբեր մշակութային ավանդույթներով, սովորույթներով, պարտադրող մշակույթով, առաջ եկավ նոր ամերիկյան և ազգային-ծագումնաբանական երկվության խնդիրը: Ամերիկյան գրականության

մեջ, սկսած 20-րդ դարասկզբից, իր մնայուն տեղը հաստատեց ազգային ինքնության, ազգապահպանության թեման, որն առավել կարևոր է հատկապես փոքր ազգերի ու ժողովուրդների համար, որոնց կենսագործունեությունը խարսխված է կյանքի կազմակերպման առավելապես ավանդական-մշակութային, քան ժամանակակից սոցիալական մեխանիզմների վրա:

Ինքնությունը բազմազգ, բազմամշակույթ Միացյալ Նահանգներում դրսևորվում է ընդհանուր քաղաքական հայացքներում: Ներգաղթը հիմք հանդիսացավ ազգային ինքնության ձևավորման համար, որը միավորեց ամերիկյան արժեքները, աշխարհայացքը և համոզմունքները: Մշակութային բազմազանությունը դարձավ ազգային ինքնության հենքը. ձուլման գործընթացում ռասայական և էթնիկ կազմավորումները պահպանեցին իրենց ինքնությունն ու ավանդույթները: ԱՄՆ-ում հաճախ ազգային ինքնությունը նույնացվում է քաղաքական հայացքների, մտածողության հետ՝ ի տարբերություն էթնիկ պատկանելության, որն ավելի սերտորեն կապված է իր ժողովրդի ավանդույթին և մշակույթին: Ամերիկյան մշակույթը կազմված է Միացյալ Նահանգներում բնակվող այլ ազգերի մշակույթների տարրերից: Ի տարբերություն ամերիկյան մշակույթի՝ հայ մշակույթը դարեր շարունակ պետության երկարատև բացակայության պայմաններում անգամ կատարել է պետական հանձնառություն. պահպանել է լեզուն, կարգավորել միջանձնային հարաբերությունները, կազմակերպել հանրային կյանքը, սերունդներին փոխանցել ազգային ավանդույթներն ու սովորույթները, ազգային մտածելակերպը, ստեղծել ժողովրդի ֆիզիկական և հոգեբանական պաշտպանության մեխանիզմներ[1]: Մշակույթն իր հետքն է թողել հայերի ազգային հոգեբանության վրա, ազգային ինքնագիտակցության մեջ եղել է համախմբող գործոն: Անժխտելի է մշակույթի, հատկապես գրականության դերը հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանպան գործում: Ի տարբերություն 20-րդ դարասկզբին Ամերիկայում ձևավորված ամերիկյան ազգային ինքնության՝ լեզուն, կրոնը, պատմական հիշողությունը, կենցաղը, պատմական զարգացման արդյունքում ձևավորված պատկերացումների և վարքի նորմերի ամբողջությունը, մշակութային ավանդույթներն ու սովորույթները, հոգեբանությունն ու արժանապատվությունը կազմում են հայ ազգային ինքնության ընդհանրական որակը, որը ձևավորվում է ներազգային շփումների, փոխներգործությունների և համակեցության արդյունքում, ինչը նշանակում է, որ ազգային ինքնության մեջ ամփոփված են անցյալում ձևավորված զգացմունքները, գաղափարներն ու պատմական հիշողությունը: Այս

---

[1] Տե՛ս՝, **Դեմիրճյան Մ.**, Հայ ազգային ինքնությունը և Սփյուռքի գործոնը գլոբալացվող աշխարհում, «Անալիտիկոն» ամսագիր, Ստեփանակերտ, 2018, 04 (112), էջ 27-31: Էլ. հղում՝ http://ysu.am/files/1-1548136936-.pdf (մուտք՝ 06.10.2020):

տեսակետից՝ ազգը մի յուրահատուկ «հավաքական մարմին» է՝ իրեն բնորոշ «հավաքական ոգով ու հոգով», և ամեն մի նոր սերունդ շարունակում է իր նախորդների կերտած պատմությունը, դառնում ազգային կյանքի կազմակերպման «մշակութային գանձարանի» իրավահաջորդը, ինչը խիստ կարևոր է ազգային ինքնության շարունակականությունն ապահովելու առումով: Գրողներն իրենց ստեղծագործություններում, ջանալով պահպանել ազգային ինքնությունը, հաճախ անդրադառնում են պատմական հիշողությանը՝ մոռացության չտալով անցյալը. չէ՞ որ անցյալը վերապրվող ներկան է:

Սփյուռքահայ գրաքննադատ Օշին Քեշիշյանը «Ամերիկահայ անգլիագիր արձակագիրներու երկերուն մեջ եղեռնի անդրադարձումը» հոդվածում ներկայացնում է ամերիկահայ անգլիագիր գրականության հիմքում ընկած հիմնահարցերը, որոնք «ընդհանուր գիծերու մէջ կը ներկայանան հետեւեալ ձեւով՝ հայոց փորձառութիւնը ցեղասպանութեան ընթացքին, որբերու փորձառութիւնը Ամերիկայի մէջ, արմատախիլ եղած ըլլալու գիտակցութիւնը, ամերիկեան ընկերութեան մէջ իր տեղը որոնող հայը, ամերիկեան մշակոյթին նպաստող հայը, երկրորդ եւ երրորդ սերունդներու ինքնաճանաչման փնտրտուքը»[2], որոնք էլ կազմում են օտարագիր հայ գրողների ստեղծագործական նյութի հիմնական շրջանակները:

20-րդ դարի 30-40-ական թթ. ամերիկահայ անգլիագիր գրողներն իրենց ստեղծագործություններով փորձում էին վառ պահել նախնյաց հիշատակը, կորած երկրի պատկերը, ջանում էին պահպանել հայի ազգային ինքնությունն ու ոգին, օտարներին ներկայացնում էին հարուստ մշակույթ ու դարավոր պատմություն ունեցող հայ ժողովրդի ազգային մտածելակերպը, ավանդույթներն ու սովորույթները, հոգեկան կերտվածքը:

Վիլյամ Սարոյանն առաջինն էր, որ հայկական թեմատիկան ներմուծեց ամերիկյան գրականություն: Միացյալ Նահանգներում ծնված ու ապրած աշխարհահռչակ ամերիկահայ գրողի՝պատգամն էր. «Ուր որ կերթաս՝ պոռա՛ Հայաստան»: Թեև հայերեն չէր գրում, բայց հայ էր իր ողջ էությամբ, հերոսներից շատերը հայեր էին, որոնք օտար ընթերցողներին ներկայացնում էին հայկական միջավայրը՝ ազգային սովորույթներով ու բարքերով, հայրենիքի պատմական հիշողությամբ: Հայրենիքի թեման, նրա դարավոր ավանդույթները պահպանող մարդկանց ինքնատիպ կերպարները հակադրվում էին ամերիկյան ապրելակերպի համահարթեցնող չափանիշներին:

Վ.Սարոյանն ազգապահպանության հենքը համարում է առաջին հերթին ազգային ոգին, ազգային յուրօրինակ խառնվածքն ու բնավորությունը, հայրենյաց ավանդների, բարքերի ու սովորույթների պահպանումը, որոնց վրա էլ

---

[2] **Քեշիշեան Օ.**, Ամերիկահայ անգլիագիր արձակագիրներու երկերուն մէջ եղեռնի անդրադարձը, «Նոր օր» շաբաթաթերթ, Լոս Անճելըս, 2005, 18 Յունիս, Շաբաթ, էջ 5:

բևեռել է իր ուշադրությունը, որոնք էլ կազմում են հայկական թեմատիկայով գրված գործերի առանցքը:

Լևոն-Զավեն Սյուրմելյանն օտարագիր հայ գրականության մեջ առաջիններից էր, որ անդրադարձավ պատմական հիշողությանը, հայրենի եզերքի կարոտին: Գրելով անգլերեն՝ իր ժողովրդի ապրած ողբերգությունը հանեց համաշխարհային ասպարեզ, պատկերեց դարի մեծագույն հանցագործությունը և ապացուցեց հայերի ապրելու իրավունքը: «Ուրիշ վերապրողներ թող գրեն հայերեն, - վկայում է գրողը, - ես պետք է իմ պատմությունն անգլերեն պատմեի: Ես կրնամ որպես ամերիկյան գրող ավելի մեծ չափով ծառայել ժողովրդիս ու անգլերեն գրելով չեմ դադրել հայ գրող մը ըլլալ»[3]:

Լ.-Զ.Սյուրմելյանն իր վեպով ցույց տվեց հայ մարդու աննկուն, չպարտվող ոգին, հոգեբանությունն ու արժանապատվությունը, կարևորեց հայրենակորույս ժողովրդի ազգային ինքնության պահպանումը: Նրա «Ձեզ եմ դիմում տիկիններ և պարոններ» վեպն ամերիկահայ գրականության մեջ ինքնության պահպանման և արտահայտման, արթնության կոչ անող առաջին վեպն է:

Դավիթ Խրդյանը շատերի նման ևս անդրադարձավ պատմական հիշողությանը: Գրողն իր «Ճանապարհ տնից» վեպում ազգային ինքնության պահպանման հիմքում դրեց կրոնի, ցեղասպանության հիշողության, հայկական ավանդական ընտանիքի, ազգային ավանդույթների պահպանման գաղափարները, որոնք օտար եզերքներում անհայրենիք հայերի համար եղել են ամուր պատվար՝ հանդես գալով որպես ազգային ինքնագիտակցության բաղադրիչներ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ -ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

Երկրորդ գլխում ուսումնասիրության նյութ են դարձել ազգային արմատներին կառչած Վիլյամ Սարոյանի պատմվածքները և դեպի ազգային արմատների վերադարձը պատկերող Փիթեր Սուրյանի «Դարպաս» (“The Gate”, 1965), Մայքլ Արլեն Կրտսերի «Դեպի Արարատ» (“Passage to Ararat”, 1975), Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սև շունը» (“Black Dog of Fate”, 1997), Քերոլ Էդգարյանի «Եփրատի մակընթացությունը» (“Rise the Euphrates”, 1994) հուշագրությունները՝ ընդգծելով երրորդ սերնդի հայապահպան ջանքերը:

20-րդ դարի սկզբներին և հետո՝ արդեն կեսերից սկսած, օտարագիր գրականության մեջ միտում է նկատվում դեպի ազգային արմատներ խնդրառության շուրջ: Ինքնակենսագրական գեղարվեստական ստեղծագործություններով ամերիկահայ անգլիագիր գրողները, որ ճակատագրի

---

[3] **Սյուրմելյան Լ.-Զ.**, Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1980, էջ 7:

բերումով, ժամանակի պարտադրանքով կտրված էին ազգային արմատներից, արյան թելադրանքով, ժամանակի հրամայականով վերադառնում են դեպի ազգային արմատներ: Լեզվի չիմացությունը ամենևին էլ չի խոչընդոտում, որ նրանք իրենց հայ զգան, ավելին՝ ուսումնասիրելով հայոց դարավոր պատմությունը, ազգային առանձնահատկությունները, կյանքն ու կենցաղը, լինելով Հայաստանում և մոտիկից ծանոթանալով ազգային մշակույթին, իրենց համարում են հայ ազգի անքակտելի մի մասնիկը, դառնում հայոց ցեղասպանության ճանաչման պահանջատերը, լծվում հայապահպանման գործին: Այս ամենը նրանց օգնում է ինքնորոշվել, ցույց տալ իրենց մշակույթի առանձնահատկությունները, որը տարբերվում է եվրոպական և ամերիկյան գրականությունից:

Սփյուռքահայ գրականության հատկանշական կողմերից մեկն էլ այն է, որ գրողը մշտապես երկկողմանի արձագանքի է սպասում: Նա միշտ ազդակներ է ուղարկում իր ընթերցողին, հետևաբար և սպասում է ակնկալելի արձագանքների:

Համաձայն ամերիկյան դեմոկրատական հայացքների՝ յուրաքանչյուր ազգի թույլատրվում է ինտեգրվել ամերիկյան հասարակությանը որպես լիիրավ անդամ, սակայն հենց այդ ինտեգրումն էլ վախեցնում է մարդուն, քանի որ ինտեգրման ճանապարհին մոռացվում է ազգայինը, և կորսվում ազգի ինքնությունը: Հայ գրողների գրական կերպարներն անընդհատ մոտենում են ամերիկյան հասարակությանը, փորձում «ներս մտնել», սակայն մի ներքին մտավախությամբ ետ են կանգնում այդ ամենից: Եթե շատ գաղթականներ ընդունում են նոր մշակույթը, նոր կենսակերպը, պարզապես պատկանելության զգացում ձեռք բերելու, նաև սոցիալապես ամրապնդվելու համար, ապա հայ հեղինակների գրական կերպարները վերամշակում են այդ նորը և հարմարեցնում հնին, ներկան միաձուլում անցյալին: Հայ մարդու ճակատագիրը կրող, հայի հոգեկերտվածքով, աշխարհընկալմամբ ու փիլիսոփայական կենսազգացողությամբ, որի առանցքում Աստված է, խիղճն ու կարեկցանքը, ամերիկահայ գրողը հավատարիմ մնաց իր ժողովրդի հավաքական ոգու՝ դարերից եկող մարդակերտման ու մարդկային կատարելության համակարգին, Աստծուն մոտենալու, նրա հետ հաշտ ապրելու ձգտմանը՝ նույնիսկ ազգին բաժին ընկած արհավիրքներից, պատուհասած զարհուրելի աղետից ու Հայրենիքի կորստից հետո:

Իր բարոյափիլիսոփայական որոնումներով Վիլյամ Սարոյանը փորձում էր գտնել արդարությունը և ճշմարտությունը, գեղեցկության և ներդաշնակության իդեալները, բարու և չարի արմատները, մարդու ազատության և երջանկության ճանապարհները՝ ոչ միայն խոր ապրումների՝ էկզիստենցիայի, այլև դատողությունների միջոցով: Գրողը դատապարտում է մարդու բարոյական անկումը, նրա կերպարի աղավաղումն ու խաթարումը, մարդկային կյանքի աններդաշնակությունը, բռնությունը, ատելությունը, կեղծիքն ու սուտը: Սարոյանի ստեղծագործության վրա զգալի է մարդկության մեծագույն Գրքի՝

Աստվածաշնչի ազդեցությունը: Նրա ստեղծագործության աստվածաշնչյան ակունքներում բարձրագույն ճշմարտությունն է. առանց Աստծո՝ աշխարհն անհեթեթ է և իմաստազուրկ:

Հայապահպանման գործում անկրկնելի է անգլիագիր **Փիթեր Սուրյանի** դերը: «Ես ամերիկացի գրող եմ և որպես հայկական սփյուռքի անդամ՝ հայ գրող եմ: Սփյուռքը նորություն չէ մեզ համար: Մեր պատմության մեծ մասը, – վկայում է Փիթեր Սուրյանը, – ծավալվել է այս կամ այն սփյուռքում: Եվ, իհարկե, «սփյուռքյան» մեր պատմությունն առավելապես ծնունդ է ամենասոսկալի դժբախտությունների»[4]: Ամերիկյան գրականության մեջ հետագիծ ունեցող ծագումով հայ արձակագիրը սրտով ու հոգով միշտ կարեկիր է եղել հայության խնդիրներին, ակտիվորեն մասնակցել է Հայրենիքի և Սփյուռքի գրական-մշակութային կյանքին:

Փ.Սուրյանի անկոտրում ոգին և ուժն են, որ նրան մղել են գրական ասպարեզ, շնորհիվ որոնց կարողացել է իր ազատ ձայնը հնչեցնել ի լուր աշխարհի, որ համայն մարդկությունը արարող է, ստեղծող և կերտող: Սուրյանը, կոսմոպոլիտ քաղաքացի է, ում համար հայրենիքը սահմաններ չունի, ում համար ազատությունը պայքար չի սիրում, քանի որ ազատությունը դուրս է պայքարից:

Խորապես ազդվելով Սարոյանից, հետևելով նրա օրինակին՝ իր ստեղծագործությունների մոտիվներն է դարձրել կյանքում իր տեղի ու կոչման համար մարդու որոնումները, աններդաշնակ հասարակության մեջ նրա թշվառության ու մենակության դրաման, պարզամտությունը, առուծախի ոգու նկատմամբ ծաղրը, իրականության ու երազանքի հակադրությունը, անհատի ներքին ազատությունն ու արժանապատվությունը, մարդկային զգացմունքների գեղեցկությունը, սիրո և բարու, մարդկանց փոխըմբռնման ու համերաշխության հաստատումը:

Սուրյանը Սարոյանի նման որոնում է սեր, բարություն: Իր հերոսներին տարածում է աշխարհով մեկ, տանում բազմաթիվ դժվարին ճանապարհներով, սակայն հաղթահարած դուրս բերում դեպի մեծ աշխարհ:

Ինչպես քսաներորդ դարի մի շարք հեղինակների, այնպես էլ Փ. Սուրյանի «Դարպաս» (“The Gate”) ստեղծագործությունում, հերոսները ստիպված են անցնել չարաբաստիկ դարի պարտադրված և թելադրող կանոնների միջով. կյանք, որը պատուհաս է բոլորի համար, բայց հանուն որի պայքարում են բոլորը, իսկ կրկնակի դժվարությամբ և մաքառումով են պայքարում նրանք, ովքեր կտրված են իրենց արմատներից և ճակատագրի

---

[4] **Սուրյան Փ.,** Գրողը և Սփյուռքը, «Գրական թերթ», Երևան, 2017, 6 Մայիս: (Ելույթ Օտարագիր հայ գրողների 4-րդ համաժողովում, Երևան, 12 հոկտեմբերի, 2011թ.): Էլ. հղում՝ //www.grakantert.am /archives/*10021 (մուտք՝ 12.04.2021):*

բերումով հայտնվել են օտար և խորթ միջավայրում: Սակայն նրանք ոչ թե բողոքում են այդ միջավայրից, այլ ջանում են ինտեգրվել և դառնալ այդ միջավայրի մի մասնիկը: Գրողն ընթերցողի դատին է ներկայացնում հայոց ցեղասպանությունը, 20-րդ դարասկզբի արևմտահայ և 60-ական թվականների ամերիկահայ քաղաքական-հասարակական կյանքն իր խնդիրներով ու բարդույթներով, սփյուռքահայության սերնդափոխությունն ու ապրելու մաքառումները:

Ազգային ինքնության, ազգապահպանության յուրահատուկ մոտեցում ենք տեսնում **Մայքլ Արլեն Կրտսերի «Դեպի Արարատ» (“Passage to Ararat”)** հուշագրական վեպում: Գիրքը անարդար աշխարհի դեմ յուրօրինակ մի բողոք է: Գրողը տարիներ շարունակ եկել է այն համոզման, որ Երկիր մոլորակի վրա դժվար է միաժամանակ հայ լինել և երջանիկ լինել:

Մայքլ Արլեն Կրտսերը, լինելով օտար միջավայրի ծնունդ, ներդաշնակված քաղաքակրթության և մշակույթի օտար արժեքներին և չափանիշներին, գիտակից ճիգով փորձում է վերագտնել իր ազգային արմատները: «Հայու այս նորօրեայ տիպարը, – ինչպես իրավացիորեն նշում է Նշան Պէրպերյանը, – կամաւոր ընտրութեամբ եւ հանձնառութեամբ կը յայտնագործէ իր հայկականութիւնը»[5]:

«Դեպի Արարատ» ինքնակենսագրական հուշ-վեպում Արլեն Կրտսերը պատանեկան հայացքով ներկայացնում է ոչ միայն իր սերդի, այլև մի ողջ ազգի ողբերգությունը, ազգայինից օտարվածությունը: Վեպում գրողն առաջ է քաշում ազգային ինքնության մի շարք կարևոր խնդիրներ՝ հոր և որդու՝ որպես երկու սերունդների ներկայացուցիչների փոխհարաբերություն, տարագրություն և հայրենիքի որոնում, որոնց վրա էլ դնում է իր շեշտադրումը: Հենվելով սեփական տպավորությունների, հիշողությունների, դեպքերի, իրողությունների, պատմական փաստերի, ներքին բնազդային-զգայական ազդակների վրա՝ Մայքլ Արլեն Կրտսերը փորձում է բացահայտում է իր ինքնության գաղտնիքները:

Հայոց պատմության իմացությունը, ցեղասպանության իրադարձությունները բոցավառում են ամերիկահայ գրողի ազգային ոգին, ձևավորում ազգային մտածողությունը և մղում դեպի արմատներ: Ազգային արմատներից կտրված, որպես անգլոամերիկացի մեծացած գրողը գալիս է այն պարզ եզրակացության, որ «եթէ պոկվեցիր քո սեփական արմատներից, օտարացնող հողմը ցաքուցրիվ կանի քեզ, ու դու կկորցնես մարդկային միայն քեզ հատուկ դիմագիծը: Հայրս փորձեց պոկուել իր հայությունից, – հարցազրույցներից մեկում ասում է Արլեն Կրտսերը, – բայց անգլիացի էլ չդարձավ. չէր կարող դառնալ»[6]:

---

[5] Նույն տեղում, էջ 3:

[6] **Արլեն Մ.Կ.,** Եթե հայ ես՝ դժվար մոռանաս անցյալդ, «Նորք» ամսագիր, Երևան, 1989, թիվ 5, էջ 152:

Մայքլ Արլեն Կրտսերն ազգային ինքնության, ազգապահպանության կարևորագույն հայտանիշն է համարում ազգի պատմության իմացությունը: Գրողը շատերի նման խստորեն դատապարտում է ցեղասպանությունը, եվրոպական գերտերությունների կեղծ երեսպաշտությունը, շահախնդրությունը և անտարբեր վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ:

Փիթեր Բալաքյանն ազգային ինքնությունը, ազգապահպանությունը տեսնում է ազգային արժանապատվության մեջ, եթե ազգը չունի արժանապատվություն, ապա ապրելու իրավունք չունի: Դա պարզ արտացոլված է «Ճակատագրի սև շունը» հուշագրությունում: Ստեղծագործության հիմքում ընկած են ազգի դառը հիշողությունը՝ եղեռնը, ավետյաց երկրի կարոտը, սերնդեսերունդ փոխանցվող պատմական անարդարության դառնությունը, ինքնադատապարտումը: Փ.Բալաքյանն իր ստեղծագործությամբ հին աշխարհը ներկայացնում է նոր ձևով՝ իր հարաշարժության ու գաղտնազերծության մեջ, և գտնում է, որ սերունդները ազգային ինքնությունը պահպանելու համար պետք է միմյանց փոխանցեն իրենց ազգի պատմությունը, ազգային կեցվածքն ու մտածողությունը և տեր կանգնեն իրենց արյան շիթերով հասած հարստությանն ու պատմությանը, այլապես ազգը չի կարող հարատևել:

Քերոլ Էդգարյանը Փիթեր Սուրյանի և Մայքլ Արլեն Կրտսերի նման պատկանում է եղեռնի երրորդ սերնդին: Հեղինակը «Եփրատի մակընթացությունը» վեպում պատկերել է իր սերնդակիցների վերադարձը դեպի ազգային արմատներ: Արձակագրուհին ոչ միայն ընդունել է իր նախնիների անցյալը, այլև նրանց նման պահանջատերը դարձել հայոց ցեղասպանության ընդունման և դատապարտման: Պատահական չէ, որ վեպի երկրորդ վերամշակված տարբերակը հրատարակվել է եղեռնի հարյուրամյա տարելիցին:

Ամերիկահայ գրողները ջանում են բարձրաձայնել իրենց ազգային արմատները և ի լուր աշխարհի հայտնել հայերի լինելիության ու գոյապահպան վտանգին սպառնացող բոլոր խնդիրներն ու հարցադրումները: Նրանց ազգային ինքնորոշման պայքարը երկակի բարդ է, քանի որ իրենց գրական ստեղծագործություններում նկարագրում են ոչ միայն ազգայինը, այլև այն օտար միջավայրը, որում ստիպված են լուծել իրենց խնդիրներն ու բախվել ազգապահպան հարցերին:Նրանց ազգային ինքնության պահպանումն արտահայտվում է գրական երկերով, որոնց միջոցով սերնդեսերունդ ներկայացվող գրական ժառանգությունն ու ավանդույթների նկարագրումը դառնում են հայ ժողովրդի հավերժի ճանապարհի վկայականը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՓՆՏՐՏՈՒՔԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՅ -ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երրորդ գլխում անդրադարձ է արվել ազգային ինքնության պահպանման փնտրտուքի խնդրին, քննվել նահանջը պատկերող Փիթեր Նաջարյանի «Ուղևորություններ» (“Voyages”, 1971), «Հիշողության դուստրերը» (“Daughters of Memory”, 1986), Նենսի Գրիգորյանի «Զաբել» (“Zabelle” 1998) վեպերը՝ որպես ազգապահպան մաքառումներ ուծացման, այլասերման, ազգայինից հեռացման դեմ:

Նահանջի գաղափարական և գեղագիտական հարցադրումները կազմում են սփյուռքահայ գրողների ստեղծագործության առանցքը: Օտարագիր հայ գրողները ցավով են նկատում, որ ժամանակն ու միջավայրը հեռացնում են հային ազգային խորհրդից. և՛ օտար բարքերը, և՛ կենցաղը աստիճանաբար դառնում են կենսաձև, աստիճանաբար դուրս է մղվում մայրենին, փոխվում են բարոյական ընկալումները: Փ.Սուրյանը, Փ.Նաջարյանը, Ն. Գրիգորյանը և ուրիշներ ակամա դարձան Նահանջի գրականության հետևորդներ: Նրանք պարզորոշ ընդգծեցին նոր աշխարհի «օրենքները», բարոյական չափանիշները, հայի ներքին դրաման հին ու նոր կյանքի համադրությամբ, նյութական և հոգևոր շահագրգռություններով:

Փիթեր Նաջարյանի ուշադրության կենտրոնում սփյուռքահայն է՝ իր բարոյահոգեբանական խնդիրներով: «Ուղևորություններ», «Հիշողության դուստրերը» վեպերում գրողը ներկայացրեց սփյուռքյան կյանքի տագնապները՝ աղետով անցած հալածյալի ծանր ողբերգությամբ, կյանքի նոր պայմաններում հարազատի և օտարի անընդհատական բախումներով, ապագայի հանդեպ վախի, անորոշության հուսաբեկ զգացողություններով և իբրև այս ամենի հետևանք՝ ուծացման, ինքնության կորստի իրական վտանգով: Նա սփյուռքյան խնդիրը փոխադրեց մարդու և մարդկայինի առավել ընդգրկուն տարածք: Փ.Նաջարյանն իր վեպերում պատկերեց հայ ժողովրդի մեծ հատվածի ողբերգությունը, նրա օրավուր նահանջը, լրացրեց, ամբողջացրեց արդեն ձևավորված նահանջի գաղափարաբանությունը՝ նոր հերոսներով ու մանրամասներով, նկատելի սրությամբ ընդգծեց սոցիալական տարրերը, առաջադրեց ազգային գոյապայքարի հնարավորություններ, ուրվագծեց նոր աշխարհի «օրենքները», բարոյական չափանիշները, հայի ներքին դրաման՝ հին ու նոր կյանքի համադրությամբ, նյութական և հոգևոր շահագրգռություններով:

Օտարագիր մյուս հայ գրողների նման՝ **Նենսի Գրիգորյանն** իր ստեղծագործությամբ ցույց տվեց նահանջը, ավելին՝ այն ներկայացրեց որպես համազգային աղետ և փորձեց դիմակայել դրա դեմ՝ այն դիտելով որպես հայ ազգի բարոյական ոչնչացում: «Զաբել» վեպը պայքար է ամերիկահայ գենի, ինքնությանից նահանջի և ինքնության կորստի դեմ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱԶԳԱՅԻՆ ՈԳՈՒ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Չորրորդ գլխում ազգային ինքնության պահպանման հայեցակետով քննվել են Վիլյամ Սարոյանի «Հայոց Անդրանիկը» (“Andranik from Armenia”, 1936) պատմվածքը, Ջեք Հաշյանի «Մամիկոն» (“Mamigon”, 1982), Հակոբ Խաչիկյանի «Ամառ առանց այգաբացի» (“Summer Without Dawn”, 1991) վեպերը, հիմնական շեշտը դրվել է դրանցում առկա ազգային-ազատագրական պայքարի, ազգային ոգու և արժանապատվության յուրօրինակ դրսևորումների վրա, որոնք դարեր շարունակ հայ ժողովուրդի ապրելու իրավունքի, ինչպես և ազգային ինքնության պահպանման կարևորագույն գրավականն են եղել:

Օտարագիր հայ գրողների ստեղծագործությունների մեջ մշտապես առաջնային է եղել այն հարցը, որ դարեր շարունակ հայ ժողովուրդն իր ապրելու իրավունքը, ինչպես և իր ազգային ինքնությունը պահպանել է ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ: :

Վիլյամ Սարոյանն առաջինն էր օտարագիր հայ գրողներից, որ «Հայոց Անդրանիկը» (“Andranik From Armenia”, 1936) պատմվածքում պատկերեց ազգային-ազատագրական պայքարը՝ կարևորելով ազգային ոգով, ազգային արժանապատվությամբ օժտված անհատի դերը: Մարմնավորելով Անդրանիկին՝ Սարոյանը ընդգծեց կոտորածների, հալածանքների, հարստահարության ուժգնացման պայմաններում հայերի օրհասական պայքարը, նրանց անձնուրաց ոգին հանուն էթնիկ գենի, ազգային ինքնության պահպանման:

Գործողությունների տրամաբանական հաջորդականությամբ **Ջեք Հաշյանը** պատկերեց հայ ժողովրդի անցած փորձություններով լի ուղին, ներկայացրեց ազգային-ազատագրական մաքառումները, հայդուկային-ֆիդայական պայքարը՝ այն համարելով համաժողովրդական ցասման արտահայտություն, ազգային ինքնության պահպանման գրավական: Ջ.Հաշյանի «Մամիկոն» վեպը Եղեռնի մասին վերապատմումն է, որում գերակա են Արևմտյան Հայաստանի կարոտը, հայի մարտական ոգին և ինքնության որոնման ջատագով գենը:

Հակոբ Խաչիկյանի «Ամառ առանց այգաբացի» (“Summer Without Dawn”2002) վեպը, որի համահեղինակն է Ժան-Իվ Սուսին, հայոց եղեռնը պատկերող, ազգային ոգին և արժանապատվությունը ներկայացնող անգլերեն լեզվով գրված միակ ծավալուն վեպն է: Հայոց պատմությանը քաջատեղյակ գրողները պատմավավերագրական փաստերով օտար ընթերցողին հավաստի ներկայացրին 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ թուրքական հարաբերությունները, Առաջին աշխարհամարտը, Օսմանյան կայսրության և դաշնակից պետությունների վարած հայատյաց քաղաքականությունը, թուրքական կառավարությունների կողմից դարեր շարունակ հայոց պատմության նենգափոխման ջանքերը, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, ազգային ինքնության պահպանման անխոնջ մաքառումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության մեջ ներկայացրել ենք 20-րդ դարի ամերիկահայ անգլալեզու արձակը, թեմատիկ տարանջատումներով քննել ազգային ինքնության թեման ամերիկահայ անգլալեզու արձակագիրների ստեղծագործություններում:

Ուսումնասիրության ընթացքում եկել ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Ամերիկյան բազմազգ խառնարանում 20-րդ դարի 20-30-ական թթ. ձևավորվել և սկսել է զարգանալ հասարակական նոր կենսապայմաններով ու կեցությամբ պայմանավորված անգլիագիր հայ արձակը, որում իր մնայուն տեղն է հաստատել աշխարհացրիվ հայության ազգային արմատների պահպանմանը միտված ազգային ինքնության թեման:

2. Ժամանակի հրամայականով պայմանավորված՝ ամերիկահայ անգլիագիր արձակագիրներն իրենց ստեղծագործություններում համադրել են նոր ամերիկյանն ու ազգայինը, հետևել ժամանակի ընկերային, հասարակական հարաբերություններն արտացոլող գրական ուղղություններին և դպրոցներին՝ առաջնությունը տալով գոյափիլիսոփայությանը և «նոր գրականությանը», ընդգծել անհատի դրաման, նրա աշխարհընկալման կերպն ու ընդվզումները, նրա ունեցած դերը հասարակական կյանքում, ձևավորված իրադրության մեջ՝ ներկայացնելով մարդկության փրկության իրենց տեսլականը:

3. Ելնելով ժամանակի մարտահրավերներից, մարդու օտարման խնդրից՝ ամերիկահայ հայագիր և անգլիագիր գրողները փորձել են պահպանել հայի ազգային ինքնությունը, մարդկությանը ներկայացրել հայ ժողովրդի դարավոր պատմությունը, օտար իրականության մեջ հայի ճակատագրի և կեցության խնդիրները, մշակույթը, ցեղասպանության հարցը՝ տալով դրա պատմաքաղաքական, ազգային և բարոյահոգեբանական գնահատականը: Որպես օտարներին չձուլվելու կռվան՝ արժևորվել է ազգային ինքնության պահպանումը, գեղարվեստական մտածողության համաձիրում շոշափվել են նախնյաց ազգային դիմորոշության հիմնարար ելագծեր:

4. Ամերիկահայության և առհասարակ սփյուռքահայության համար ազգային ինքնության պահպանումը ազգային մտածողության ու հոգեկերտվածքի հիմնարար գծերին, պատմական հիշողությանը, կրոնին, մշակութային ավանդույթներին ու սովորույթներին հավատարիմ մնալն է:

5. Ամերիկահայ անգլագիր ածակագիրների ստեղծագործություններում ազգային ինքնության նկարագիրը պարզող ընդհանրական որակ են կազմում ազգային արժանապատվության գիտակցումը, պատմական զարգացման արդյունքում ձևավորված աշխարհայեցողության, ընկալումների և վարքի նորմերի ամբողջությունը, կենցաղի առանձնահատկությունները:

6. Ազգային ինքնության թեման ամերիկահայ անգլիագիր արձակագիրների ստեղծագործություններում քննվել է տարբեր տեսանկյուններից՝

• Լ.-Զ.Սյուրմելյանը «Ձեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ» գեղարվեստավավերագրական վեպում ազգային ինքնության պահպանմանն ի խնդիր կարևորել է ազգային հոգեբանությունը, արժանապատվությունը, դարավոր պատմության իմացությունը:
• Դ.Խրդյանը «Ճանապարհ տնից» վեպում ազգային ինքնության պահպանմանն ի խնդիր կարևորել է կրոնի, ցեղասպանության հիշողության, հայկական ավանդական ընտանիքի նկարագրի պահպանման գաղափարները՝ որպես ազգային ինքնագիտակցության ապահովման բաղադրիչներ:
• Փ.Սուրյանը «Դարպաս», Մայքլ Արլեն Կրտսերը «Դեպի Արարատ», Փ.Բալաքյանը «Ճակատագրի սև շունը», Ք.Էդգարյանը «Եփրատի մակընթացությունը» վեպերով ներկայացրել են սերնդափոխությամբ պայմանավորված իրադրությունը, նորօրյա կյանքն իր խնդիրներով, մարդկային բարդույթներով, երրորդ սերնդի՝ բարդ ու հակասական, հոգեբանական երկվություններով լի ինքնաճանաչման ուղին, վերադարձը դեպի ազգային արմատները, ազգային ինքնությունը պահպանելու մաքառումները:
• Փ.Նաջարյանը «Ուղևորություններ» և «Հիշողության դուստրերը», Ն.Գրիգորյանը «Զաբել» վեպերով պատկերել են հարազատ հողից կտրված հայի՝ օտար միջավայրում ազգային արմատներից աստիճանական օտարումը՝ նահանջը, ցեղասպանության ականատեսների զավակներից ոմանց՝ անցյալի ըմբռնման և գնահատման անկարողությունը, պատմությունից դասեր չքաղելու ցավալի իրողությունը, ամերիկացումը, ազգային արժեքների ուրացումը, հայ ազգի բարոյական նկարագրի խաթարումը՝ փորձելով գեղարվեստի ուժով հային հետ պահել ուծացումից և օտարացումից:
• Վ.Սարոյանը, Ջ.Հաշյանը, Հ.Խաչիկյանն իրենց ստեղծագործություններում կարևորել են ազգային ոգին և արժանապատվության զգացումը՝ իբրև ազգային ինքնության հենքը կազմող նշանակալի առանձնահատկություններ: Վ.Սարոյանն ազգային ինքնությունը պայմանավորող հայտանիշների շարքում շեշտադրել է ազգային յուրօրինակ խառնվածքը, բնավորությունը, հայրենյաց ավանդների, բարքերի ու սովորույթների պահպանումը, Ջ.Հաշյանը՝ կյանքի դառնություններին հայի դիմակայելու զորությունը, ազգային գիտակցության ձևավորման սերնդակազմ ավազանի՝ ամուր ընտանիքի պահպանումը՝ որպես ազգի հարատևման կռվան, Հ.Խաչիկյանը պատմական հարուստ տեղեկություններով պատմափաստագրական նյութերով, քաղաքական լուսաբանումներով և մեկնաբանություններով հագեցած ծավալուն վեպով ընդգծել է հայի ազգային անկոտրում ոգին, ազատատենչությունը՝ արժևորելով ազգային արժանապատվությունը: Վ.Սարոյանը, Ջ.Հաշյանը, Հ.Խաչիկյանը, հիմք ընդունելով 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ և թուրք ժողովուրդների փոխհարաբերություններն արտացոլող տվյալները, իրենց ստեղծագործություններով ներկայացրել են հայոց եղեռնի պատմական հայեցակերպը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՅՈԼՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1.«Ազգապահպանության խնդիրը օտարագիր հայ գրողների ստեղծագործություններում», Լրաբեր հասարակական գիտությունների, 2018, հ.3, էջ 217-224:

2. «Հայոց ցեղասպանության թեման Փիթեր Բալաքյանի «Ճակատագրի սև շունը» հուշագրությունում», Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2018, հ 5, էջ 415-423:

3. «Եղեռնը և անցյալի վերհուշը Լևոն Զավեն- Սյուրմելյանի «Ձեզ եմ դիմում տիկիննե՛ր և պարոննե՛ր» վեպում», «Բանբեր» Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի, 2018, հ1(46), էջ 104-110:

4. «Եղեռնի թեման Դավիթ Խրդյանի «Ճանապարհ տնից» վեպում», Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2021 (11), էջ 339-347:

5. «Ազգային ինքնության թեման Փիթեր Նաջարյանի «Ուղևորություններ» վեպում», Հայագիտական հանդես, 2021, 5(54), էջ 78-87:

6. «Ազգային ինքնության թեման Փիթեր Սուրյանի «Դարպաս» վեպում», Հայագիտական հանդես, Երևան, 2022, 1(55), էջ 98-109:

7. «Ազգային-ազատագրական պայքարը ազգային ինքնության պահպանման դրսևորում Հակոբ Խաչիկյանի և Ժան-Իվ Սուսիի «Ամառ առանց այգաբացի» վեպում», Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Հումանիտար և հասարակական գիտություններ, 2023, հ.1, էջ 109-118:

8.«Ազգային ինքնության պահպանման դրսևորումը Քերոլ Էդգարյանի «Եփրատի մակընթացությունը» վեպում». ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ, 2023, հ.1(26), էջ 203-211:

9. «Ազգային ինքնության որոնումները Մայքլ Արլեն Կրտսերի «Դեպի Արարատ» վեպում», Շիրակի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Բ, 2023, հ 1, էջ 58-67:

10. «Ազգայինից նահանջի թեման Նենսի Գրիգորյանի «Զաբել» վեպում», էջմիածին, 2023, Զ տարի, էջ 142-152:

Галстян Нелли Бакуровна

ТЕМА НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ В ПРОЗЕ АРМЯНО-АМЕРИКАНСКИХ АНГЛОЯЗЫЧНЫХ ПИСАТЕЛЕЙ XX ВЕКА.

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 28.11.2023 года в 14:30 на заседании специализированного совета 066 ВАК ("Зарубежная литература"), действующего в Ереванском государственном университете, по адресу г. Ереван, ул. А. Манукяна 1, ЕГУ, 7-й корпус, факультет Европейских языков и коммуникации, аудитория 422.

Резюме

Дисертация посвящена теме национальной идентичности в прозе армяно-американских англоязычных писателей XX века, в частности изучению творчества У. Сарояна, Л,-З. Сюрмеляна, Д. Хрдяна, М.Арлен Младшего, П. Балакяна, П. Суряна, П. Нагжаряна, К. Эдгаряна, Н,Григоряна, Дж. Ашяна, А. Хачикяна.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованной литературы. Работа написана на 163 компьютерных страницах.

В введении кратко излагается основной предмет исследования диссертации, обосновывается актуалъность выбраной темы, формируется цель и задачи работы, научная новизка, методологическая база, предыстория вопроса и литература, относящаяся к теме.

В первой главе («Вопросы армяно-американской этнической литературы в контексте американской литературы XX века») были представлены: общая картина американо-армянской литературы, экзистенциально-философские вопросы и проблемы сохранения национальной идентичности американо-армянских англоязычных писателей XX века, исследованы их причинно-следственные связи и обстоятельства.

Была изучена двойственность национальной идентичности как культурного проявления в американской и национальной сферах, были представлены устремления У. Сарояна к сохранению национальной идентичности. Сопоставляя прошлое и настоящее, исследовалась тема сохранения национальной идентичности в романах Л.-З. Сурмеляна «Прошу вас, дамы и господа» (1945 г.) и Д. Хрдяна «Дорога из Дома» (1979 г.).

Во второй главе («Национальная идентичность и историческая память как проблема армяно-американской литературы») были рассмотрены рассказы У.Сарояна и роман П.Сурьяна «Ворота» (1965 г.), вскрывающие национальные корни и дух, а также мемуары Майкла Арлена Младшего «К Арарату» (1975 г.), П. Балакяна «Черный пес судьбы» (1997 г.), К.Эдгаряна «Евфратский прилив» (1994 г.), изображающие возвращение к национальным корням и подчеркивающие усилия писателей третьего поколения по сохранению армянства.

Начиная с 20-го века, в зарубежной литературе наблюдается тенденция обращения к национальным корням. Своими автобиографическими художественными произведениями американские англоязычные армянские писатели, волею судьбы, оторванные от своих национальных корней, по зову крови возвращаются к своим национальным корням.

В третьей главе («Проблема поиска сохранения национальной идентичности в армяно-американской литературе») рассматривалась проблема поиска сохранения национальной идентичности, проанализированы тема отступления в романах Питера Наджаряна «Путешествия» (1971 г.), «Дочери памяти» (1986 г.), и Ненси Григорян «Забель» (1998 г.), как борьба против национальной самобытности, против ассимиляции, вырождения, отчуждения, отстранения от национального.

Армянские писатели-эмигранты с болью отмечают, что время и среда отдаляют армянина из национального менталитета и чуждые нравы и быт постепенно становятся образом жизни, родной язык постепенно выталкивается, меняются нравственные представления.

Они дополняют сформировавшуюся во Франции в 20-30 годах идеологию отступления с новыми героями и новыми детальями, подчеркивают социальный фактор и выдвигают возможности борьбы за национальную жизнь.

П. Сурьян, П. Наджарян, Н. Григорян и другие невольно стали последователями литературы Отступления. В своих романах они ярко подчеркивали «законы» и нравственные нормы нового мира, внутреннюю драму армянина, сочетающего старую и новую жизнь, материальные и духовные интересы, следовали сохранению национальной идентичности, национального духа.

В четвертой главе («Художественное выражение проявления национального духа и освободительной борьбы в армяно-американской литературе») с точки зрения сохранения национальной идентичности были рассмотрены рассказ Уильяма Сарояна, «Андраник из Армении» (1936 г.), романы Джека Гашьяна «Мамигон» (1982 г), и Акопа Хачикяна, «Лето без зари» (1991 г.). Основной упор делался на национально-освободительную борьбу, национальный дух и уникальные проявления достоинства, которые на протяжении веков были важнейшей гарантией права армянского народа на жизнь, а также сохранения его национальной идентичности.

В выводах диссертации обобщается проведенное исследование и по пунктам выделяются его результаты и наблюдения. В конце диссертации представлен полный список использованных источников и литературы.

В выводах диссертации обобщается проведенное исследование и по пунктам, выделяются его результаты и наблюдения. В конце диссертации представлен полный список использованных источников и литературы,

Galstyan Nelli Bakur

THE TOPIC OF NATIONAL IDENTITY IN THE PROSE OF THE 20TH CENTURY AMERICAN-ARMENIAN ENGLISH WRITING OF WRITERS'

The defense of the dissertation will take place on 28.11.2023 at the **HQC of RA's** specialized council 066 of "Foreign Literature" in Yerevan State University (address: Yerevan, Aleq Manukyan str. 1, YSU, 7th building, Faculty of European Languages and Communication, room 422.

Summary

The dissertation is devoted to the topic of national identity in the prose of Armenian-American English-writing authors of the twentieth century, in particular to the study of the works of W. Saroyan, L,-Z. Surmelyan, D. Kherdyan, M. Arlen the Younger, P. Balakyan, P. Suryan, P. Nagzharyan, K. Edgaryan, N. Grigoryan, J. Ashyan, A. Khachikyan.

The dissertation consists of an introduction, four chapters, a conclusion and a list of references. The work comprises 163 computer pages.

The introduction briefly outlines the main subject of the dissertation research, substantiates the relevance of the chosen topic, and formulates the purpose and objectives of the work, scientific novelty, methodological base,background and literature related to the topic.

In the first chapter: "Questions of Armenian-American ethnic literature in the context of American literature of the 20th century", the general picture of American-Armenian literature, the existential-philosophical and national identity preservation problems of American-Armenian English-writing authors of the 20th century are presented, their cause and effect connections and circumstances are examined.

Reference is made to the duality of national identity in the American and national domains, viewing it as a cultural manifestation, William Saroyan's national identity preservation aspirations are presented. the theme of preservation of national identity is examined by combining the past and the present in the novels by Levon-Zaven Surmelyan's "I Ask You, Ladies and Gentlemen" (1945) and by David Kherdyan's "The Road from Home" (1979).

In the second chapter, "National identity and historical memory as a problem of Armenian-American literature", Saroyan's stories highlighting the national roots and spirit are examined, the memoirs by P. Suryan "The Gate" (1965), Michael Arlen Jr. "Passage to Ararat"(1975), by P. Balakyan " The Black Dog of Fate" (1997), by K. Edgaryan " The Rise the Euphrates" (1994), depicting a return to national roots, the Armenian preservation efforts of the third generation writers are emphasized. Since the 20th century, there has been a tendency in foreign literature to appeal to national roots.

By autobiographical fiction, American-Armenian English-writing autors, who were cut off from their national roots due to fate, due to the compulsion of time, are returning to their national roots by call of blood.

Not knowing the language did not prevent them from considering themselves Armenian, moreover, by studying the centuries-old history of Armenians, national characteristics, life and lifestyle, being in Armenia and getting to know the national culture closely, they consider themselves an inseparable part of the Armenian nation, become the claimant for the recognition of the Armenian Genocide, and commit themselves to the cause of preservation of Armenia.

All this helps them to constitute themselves, to show the characteristics of their culture, which certainly differs from European and American literature.

In the third chapter, "The problem of the search for the preservation of national identity in Armenian-American literature", the problem of the search for the preservation of national identity is addressed, the novels by Peter Najarian "Voyages" (1971), "Daughters of Memory" (1986), Nancy Grigoryan "Zabelle" (1998) are analyzed depicting the retreat, as nationalistic protests against assimilation, degeneracy, alienation from national realties.

Armenian authors writing in foreign languages note with pain that time and environment are distancing Armenians from national thinking. Both foreign manners and daily life are gradually becoming a way of life, the mother tongue is gradually pushed out and, moral perceptions change.

The works of foreign Armenian writers respond to this frequently asked question. They complete, the ideology of retread formed in France make whole In the 20s-30s with new heroes and new details, emphasize the social factor and present opportunities for national struggle. P. Suryan, P. Najarian, N. Grigoryan and others unwittingly became followers of "Nahanj" literature. An Armenian in the diaspora, who does not have national ground under his feet, a lifestyle developed for centuries', a national environment, a vision of an Armenian homeland, is doomed to assimilation.

By their novels, they clearly emphasize the "laws" and moral standards of the new world, the internal drama of the Armenian with the combination of old and new life, material and spiritual interests, pursued the preservation of national identity and national spirit.

In the fourth chapter: "The artistic expression of manifestation of the national spirit and liberation struggle in Armenian-American literature", from the standpoint of preservation of national identity, in the short story by William Saroyan "Andranik from Armenia" (1936), the novels by Jack Hashyan "Mamigon" (1982), Hakob Khachikyan "Summer Without Dawn" (1991), the main emphasis is placed on the unique manifestations of national liberation struggle, national spirit and dignity, which have been the ultimate guarantee of the Armenian people's right to live, as well as the preservation of their national identity for centuries.

The Conclusions of the dissertation summarize the conducted research and single out its results and observation point by point. At the end of the dissertation, a complete list of sources and literature used is presented.